	LI 53-01-01-01	Էջ 1 / 2
	ՎԵՃԵՐԻ ԼՈՒՇՄԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ	
	Խմբագրություն՝ 01 Ուժի մեջ է՝ 19.04.2013թ.	



Հարգելի՛ հաճախորդ, տեղեկացնում ենք, որ Ձեր իրավունքները կարող են պաշտպանվել ինչպես **դատական** կարգով, այնպես էլ **Ֆինանսական համակարգի հաշտարարի** միջոցով:



Դատարան դիմելու դեպքում Ձեր և «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) միջև ծագած վեճը լուծում է դատարանը: Դուք կարող եք դիմել դատարան բողոքի քննության ցանկացած փուլում: Դատարանի վճիռը չի կարող վերանայվել Ֆինանսական համակարգի



Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու դեպքում Ձեր և Բանկի միջև ծագած վեճը լուծում է Հաշտարարը՝ «**Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին**» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայություններն **ԱՆՎՃԱՐ** են:

Բողոք ունենալու դեպքում Դուք նախևառաջ պետք է դիմեք Բանկ: Բանկը պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Ձեր բողոքին: 10 օրից պատասխանը ստանալուց հետո կամ, եթե պատասխան չեք ստացել, առանց դրա, Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Ֆինանսական համակարգի հաշտարարը **չի կարող քննել** Ձեր բողոքը, եթե՝

1. Բողոքը Բանկ ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր,
2. Դուք չեք պահանջում դրամական կամ այլ գույքային հատուցում, Ձեր կողմից պահանջվող հատուցումը գերազանցում է 10 միլիոն դրամը (կամ դրան համարժեք արտարժույթով գումարը),
3. Բանկի պատասխանը ստանալուց հետո անցել է ավելի, քան վեց ամիս,
4. Ձեր կողմից բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել մինչև 2008թ. օգոստոսի 2-ը:




Ձգուշացնում ենք նաև, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե այն քննվում է դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) վճիռը:



**Ֆինանսական համակարգի
հաշտարարի գրասենյակ**

Հաշտարար՝ Փիրուզ Սարգսյան
 Հասցե՝ Մ. Խորենացու փ. 15, ՀՀ, Երևան, 0010,
 «Էլիտ Պլազա» բկ. 7-րդ հարկ
 Հեռ.՝ (374 10) 58 23 21, 58 23 22
 Էլ. հասցե՝ info@fsm.am
 Ֆաքս՝ (374 10) 58 24 21
 կայք՝ www.fsm.am

	LI 53-01-01-01	Էջ 2 / 2
	ՎԵՃԵՐԻ ԼՈՒՇՄԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ	
	Խմբագրություն՝ 01 Ուժի մեջ է՝ 19.04.2013թ.	




Հարգելի՛ հաճախորդ, հայտնում ենք Ձեզ, որ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն հրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից այն գործարքների համար, որոնց գումարի չափը չի գերազանցում 500.000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը և միաժամանակ գույքային պահանջի հիմքով ներկայացրած բողոք-դիմումում նշված պահանջի դրամական արտահայտությունը չի գերազանցում 250.000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Դա նշանակում է, որ Բանկը չի կարող դատական կարգով վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից Բանկի դեմ կայացված որոշումները: հաշտարարի կողմից:



Դուք կարող եք նաև բողոքներով դիմել ՀՀ կենտրոնական բանկ: Տեղեկացնում ենք, որ Կենտրոնական բանկն իրավասու չէ լուծել Ձեր և Բանկի միջև վեճերը, սակայն կարող է Բանկի նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, եթե պարզվի, որ վերջինս խախտել է օրենքի պահանջները:



ՀՀ կենտրոնական բանկ

Հասցե՝	Վ.Սարգսյան 6, ՀՀ, Երևան, 0010,
Հեռ.՝	(374 10) 59 26 97
Էլ. հասցե՝	chairman@cba.am
Ֆաքս՝	(374 10) 56 54 96
կայք՝	www.cba.am



Հարգելի հաճախորդ, հայտնում ենք, որ եթե Ձեր և Բանկի միջև կնքվել է **արբիտրա-ժային համաձայնություն**, դա նշանակում է, որ Բանկի հետ կնքված պայմանագրից բխող վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային տրիբունալի կողմից: Դուք զրկվում եք Բանկի հետ կնքված պայմանագրից բխող վեճերի կապակցությամբ դատարան դիմելու իրավունքից: Արբիտրաժային տրիբունալի վճիռները, որպես կանոն, դատարանի կողմից վերանայման ենթակա չեն: